

32. ԼԵՀԱՀԱՅՈՑ ԽՆԴԻՐՔ — ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐԲԵՊԻՍ-ԿՈՊՈՍ

Այս խնդիրներու մասին մանրատուութիւններ Գրեթե Մարտի 19, էջ 363—389: Առաջել հաւաքած է իւր տեղեկութիւնները կաթողիկոսարանի գիււանին թղթերէն, Սաչատուր Կեսարացոյ գեղուցուններէն եւ էջմիածին երթեւեկող պատգամաւորներու հազորդագրութիւններէն: Իբրեւ ականատեսէ գրի առնուած վաւերագիր կարեւոր է իրաց լուսաւորութեան համար Սիմէոն Լեհացոյ մէկ Յիշատակարանը էջմիածնի թ. 1004 ձեռագրին մէջ: Այս Յիշատակարանը միաժամանակ կուտան կը ծառայէ մեզի Սիմէոն դպիր Լեհացին ճանչնալու հեղինակ այն սկիզբն եւ վերջը պակասաւոր ոտանաւոր գրութեան, զոր հրատարակած է Հ. Ղ. Ալիշան «Վիպասանութիւն Նիկոլական» խորագրի տակ, Կամենից, էջ 202—214: Այլուր մտադիր եմ տալ այն ապացոյցները, որոնք կը մղեն զիս Սիմէոն դպրի ընծայելու Վիպասանութիւնս*:

Ալոյզիոս Պիզու, որ գրի առած է Նիկոլայոս Արքեպիսկոպոսի եւ Լեհահայոց կաթողիկէ Եկեղեցոյ հետ Միութեան պատմութիւնը, երկրորդաբար միայն խօսած է 1626—1634 տարիներու զիպաց մասին, որոնք հոս առաւելապէս նկատի պիտի առնուին: Ա. Պիզուի գործին հայերէն թարգմանութիւնը հո-

* Սիմէոն դպրի Լեհացոյ Ուղեգրութիւն. Վիեննա 1936, Յոռաջարան: